

կայք՝ ի տեսանելին զահագինսն արք եւ կանայք, մինչեւ ցանարգել աղջկանց բընակք եւ եկք հետեւեալք ի քաւարանն սուրբ առ ի մաղթանս: Եւ բազում լինէր տագնապ ահին, մինչ զի ոմանք լեղեպատառք եղեն եւ յաւէտք կարծէին զժամ կատարածին, գոչէին Տէր ողորմեա՛յ, մինչեւ ի վերոյ յիշեցեալ պահօքն, ապա եւ երաց զլոյս իւր: Եւ լուսինն ի խոյն մտանէր այսօր. նաեւ լուսին ծնունդ էառ եւ արեգակն ի խոյն մտեալ էր Ժ օր յառաջ, եւ լուսին պատահէր առ արեգակն եւ խաւարէր լոյս նորա. ոչ թէ խաւարէր՝ այլ ծածկէր ի նմին պահու, մինչեւ լուսին զատէր ի նմանէ եւ յիւրում սահմանեալ ճանապարհի երթայր եւ յընթացք. նա եւ դուշակն Աստուծոյ է գիտելի եւ ոչ այլոց: Ուստի եւ արքայն զարհուրեալ եւ յոյժ երկուցեալ՝ մինչդեռ էր արտաքս ի քաղաքէն ելեալ ի յորս երէոց, եւ անդէն ի նոյն ժամու խոնարհեալ՝ զհնար հարցանէր և առ Աստուած բարձեալ զաղաղակ, ուխտս բազում դնէր եթէ փրկեսցես զիս ի տարաժամ ցասմանէս՝ տայց պատարագս քեզ ի հաճոյս: Եւ այգուցն բաշխս արծաթի առաքէր առ սօփտայս եւ ոչ յաղքատս, բայց զբանտարգեալս արձակել հրամայեաց: Եւ եղեւ առատութիւն ամենայն բարեաց ի քաղաքս ի ծովէն ովկիանեայ բազմապատիկ եւ յեգիպտոսէ, եւ ձի տրամ էր հացն մինչեւ ցարդ:

Մտեալ Թաթարն ընդ Ղազախին ի գաւառն Մօսկօֆոյ եւ ասացին Ջոփ գերի հանեալ անտի, եւ ցըրուէին յամենայն աշխարհ եւ (որոշ կորուսած):

զեալ զահագինսն՝ ի մեծ շուկայն ի խանութս եւ ի վաճառս թաւան առնէին, և անառակք զկանայս լըկէին (սղըր կսրում) աղքատք զմեծատանց զգեստ զգեցեալ և ի դուրս [եւ]անէին, վասն որոյ և այլ . . . բաղնապանք ի նոյն պահու յրու . . . (սղերը կսրում):